

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAMRE



Չի հրատարակում ձեռագրերը
ևս չի՛ն տրոխր :



ՊԱՅՄԱՆՔ

ԵՐԻՊՏՈՍ

Տարեկան գր. ողջ


30

ԱՐՄԱՍՏՄԱՆ

Տարեկան գրանց

10

Փաստաբան ՅԱԿԵԼԻԱՍ ԳԵՐՈՒ ՓՈԽԱՐԷՆ
վերադառնալից գրեթե պիտի բլլան :



ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Ր Ա Ք Ա Ր Ա Ք Ե Ր Ք

Փաստաբանությունը կանխիկ է, իսկ
ժամանակակից կ'ընդունուի մասնա-
նոր համաձայնությամբ :

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերադառնալից հարստի խնդրոց համար
պիտի կ ղիտեղ հարստություն հասցեով
քերթիս Մասնաբանին, որ է՛

Քառասուն և հինգուկես
ԵՂՎՅԷ ԹՈՒՐՈՍԵԱՆ

ՉՈՐԵՔՄԱՐԹԻ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՄԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յոթնամյակից հետո ուղղակի պատասխանա-
տու են լինեց զամենուրեք

ZUSC 20 ՓԱՒԱ ՈՂՁ

ԽՈՒՅՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁ

Նախորդ յոդուածով մը սրտ-
չած էինք՝ ինչպէս ամէն գաւառ-
ներու հայերը, նոյնպէս ալ Եղիպ-
տաբնակ հայութիւնը կառաւարելու
կոչուած Ազգային սահմանադրու-
թեան մասին քանի մը խօսք ընել-
ի էպէտեւ Եղիպտոսահայերու մէջ
անկեղծ ըլլալը և ճշմարտութիւն-
ներու վրայ խօսիլը փորձանքներու
մէջ գլխաւոր կը նշանակէ, սակայն ա-
տիկայ արդեւ մը չէ ինչպէս մեր
ընթերցողներէն, որ անձնական ինչ
ինչ թագուն կարծուած նկատու-
ներով, գո՛նէ « Արշալոյսի » ի ան-
կախութիւնը արհամարհանքի առար-
կայ չի դարձնեն :

Ազգամտութիւնը ա՛յնպէս կը
պահանջէ որ — թէ և անոր բաշակա-
յութիւնը շատ մը տեղերու համար
հաստատուած իրողութիւն մ'է — և
թէ կարելի է, և ինչո՞ւ չէ, մեր
ազգայիններն ալ ձայնակոչին ու գոր-
ծակցին մեզի՛ նմանօրինակ գծու-
րին ձեռնարկներու մէջ : Այսպէս
համախորհուրդ վարչութիւնը ո՛չ միայն
անարգանք մը չէ ու չ'պիտի ըլլայ
մեր ազգային գործոց վարիչներուն՝
սրտք երբեմն չափազանց ալ գիւ-
րադաւ են, այլ և մեծարանք մը
պաշտօնի վրայ եղող ժողովական-
ներուն, և քաջակերութիւն՝ անոնց
յաջորդելու սահմանաձեւներուն :

Մեր համայնքին գործերը մի-
այն կտորելով թափելով չէ՛ որ ան-
ոպթիմալ շարժիլ մը մէջ պիտի
ընթանան, այլ՝ յիսխարարձ յար-
գանքով համերայնութեան ամրա-
պինդ կապ մը հաստատելով ժողո-
վուրդին և վարիչներուն մէջ : Ժո-
ղովրդի խաւերէն ելած երբեմն գե-
ղահոյութեան ձայնը ուրեմն, պէտք
չէ՛ որ խրաչեցնէ վարչութիւնները,
այլ անիկայ է որ վարչային մեքե-
նային ընթացքը պիտի կրնայ յա-
րատուութեան գծին մէջ պահել :

Եթէ լուրջ նկատողութենէ վը-
րիպէ համերայնութեան այս կարեւոր
պարագան, ազգային զգայման տե-
տակետով հոգիներու սուսացումը վը-
րայ կը հասնի, ու ամեն սիրտ ա-
նորոշութեան համար կը բարախէ :

Իսկ ասոնց հետեանքը՝ առաջին ան-
գամը չէ՛ որ ողբալու գծապղու-
թիւնը պիտի ունենանք :

Ահա այս վերջին կէտին վրայ
է որ յիշ մը ծանրանալ կուզենք
մեր այսօրուան գրուածովը, և կը
սիրենք յուսով թէ՛ մեզմէ ո՛չ ոք
խճրճանքը սիրելէ առաջ եկած զգա-
ցումի մը պիտի վերագրէ ու ցաւիլ
ուզէ մեզմէ, ազգային օրինաց մա-
սին մեր յայտնած զիտողութիւն-
ները և սկստույ մասնանիշ ըրած
զանցառութիւնները զանազան մէկ-
նութիւններու ենթարկելով :

Ժամանակն է որ մեր ազգային
հնամիտի աւանդութիւնները և մա-
նաւանդ ազգային նկարագիրը ու
օրէնքները խաթարուի ենթարկելէ
զգուշանանք և սլլատելու մի հասնե-
քէն չ'մղւելնք, որ՝ ըստ ոմանց
միջավայրին պահանջները համար-
ուած են ատենք, և ըստ բազմաց՝
ազգին անխուսափելի ձուլումը օ-
տար տարրերուն մէջ և այլատելու :

Այս նպատակէն չ'ջեղելու հա-
մար մեզի կրնան ծառայել մեր ե-
կեղեցին՝ օժտուած ունենալով պար-
տաճանաչ և գիտակից պաշտօնեա-
նիքով, և մեր ազգային Սահմա-
նադրութեան անթերի գործադրու-
թիւնը, թէ և ատենք՝ մանաւանդ
վերջինը՝ տեղւոյ պահանջներուն և
արդի մաւառականութեան համար
լիակատար բան մը եղած չըլլայ :

Ազգային սահմանադրութեան
կարեւորութիւնը՝ տարիներէ ի վեր
անոր գէ՛մ հանուած և վերջնական
ընթացքին ձգտող թաղուն և յայտնի
ընթացքը մեզի կը սորվեցնեն. անոր
կարեւորութիւնը. հետեւաբար՝ անոր
գէ՛մ հանուած հալածանքին սաստ-
կութենէն կարելի է չափել, ասի-
կոյ ա՛յն նմարն է, որուն միջոցաւ
պէտք է զուտ սովիներու ծանրու-
թիւնը ստուգել :

1890 ական թուականներուն և
անկէ քիչ մ'ալ աւելի առաջ գրե-
թէ անգործաբարի վիճակի մը մատ-
նուած է իր կեդրոնին մէջ Սահմա-
նադրութիւնը, և անոր գոյութեանը
սպառնալից ծրագրի մը յամրըն-
թաց գործադրութիւնը սպայուց-
ուած զանազան աւիթներով : Կեդ-
րոնէն զատ այլ և այլ տեղերէ հը-
րապարակ գրուած տեղեկութիւն :

ներն ալ այդ միւսոյն իրողութիւնը
հաստատած են : Գոնէ այս տեղ Ե-
ղիպտոս, ուր միջոցները աւելի լայն
և թոյլատու են, բացառութիւն մը
կազմելու ուժեղ պահանջութիւն :
Նե՛րը տեսնուէին, ո՞րչափ միխի-
րական պիտի ըլլար :

Ազգեան պատրիարքին օրով
Սահմանադրութիւնը պետական ծա-
նրը հարուածը կրեց. Մայիս 24 ին
Ս. փրկչեան Ազգ. Հիւանդանոցին
պարտէզը կատարուած տարեգարծի
հանդէսներուն հայ համայնքին մաս-
նակցութիւնը յայտնի արգելքի տակ
աւանդելով : 1890-91 թուականին
Պօլիս եղիպները, մանաւանդ պատ-
րիարքարանի մօտերը գտնուող Թա-
ղեցիները շատ լաւ կը յիշեն թէ՛
ինչպէս ստիկաններով պաշարուած
էին Եէտի — Գուլէ տանող երկա-
թուղւոյ բոլոր կայարանները՝ Սիրքե-
ճիէն սկսեալ, և թէ ինչպէս փրկչի
պարտէզին մուտքը ամենախիստ
հսկողութեան ներքեւ աւանուած էր :

Պօլսոյ ստիկանութիւնը իր այս
արարքը թէ և ժողովրդական ցոյցի
մը հաւանականութեան առջեւ առ-
նելու պատճառաբանութիւններովը
կ'արդարացնէր, սակայն արտաքին
երեւոյթները փրկելէ զատ ուրիշ բանի
չէին ծառայէր այս առարկութիւն-
ները : Ներքին միւսքը սահմանադ-
րութեան աւանձնաշնորհները կապ-
անին էր, ու ասիկայ մենէ ոչ ոքին
ուշագրութենէն վրիպած էր :

Նոյնը և քիչ մը աւելի խիստ
պայմաններու ներքեւ տեղի ունեցաւ
Իզմիրեան պատրիարքի օրով, սա-
կայն կառավարութիւնն ալ ըմբռնեց
թէ՛ իր հաւատարիմ հպատակներուն
գէ՛մ այս խտտութիւնները լաւ ար-
դիւնքի մը չ'պիտի յանգէին, ուստի
գիւանադիտական միջոցներով իր նը-
պատակին հասնելը աւելի նախա-
մեծար համարեց :

Օրմանեան պատրիարքը պաշ-
տօնի գլուխ անցաւ, որ ատակ էր այդ-
ծրագրին գործադրութիւնը իր շա-
հերուն հետ հաշտեցնելու, և նրա-
ցած քաղաքականութեամբ մը քան-
գող հարուածները տուաւ Սահմա-
նադրութեան, և այսօր անուանա-
կան գոյութիւնը կը պահպանուի լոկ-
քիչ անդամ յաւելեալ և ճոխացեալ,
և շատ անգամ յապաւեալ և կըր-
ճատեալ :

Հակառակ որ Օրմանեան պա-
տրիարքի համակերպող քաղաքա-
կանութիւնը իրաւացի համարողներու
չըլնակ մը կայ, սակայն անոր
ընթացքուն արդիւնքը՝ որչափ կը
կարծենք, ուղիւ չ'համեմատիր հայ
ժողովուրդի միահամուռ փափաքա-
նաց : Մէկդի թողլով գաւառներու
ճնշուած միջնաշրջան արդիւնք չա-
փաւորուած լուրիւնը, մենք քիչ
մը աղատ պիտի խօսինք առաջիկայ
թուով Եղիպտոսի նկատմամբ, ու
ազգային Սահմանադրութեան սգոյն
կրած գիտումնաւոր հարուածները
պէտք չէ որ նկատողութենէ վրե-
պեցնենք, որովհետեւ այս տեղ կա-
տարուած փոփոխութիւնները ուրիշ
աւելի կարեւոր փուլուներու պատ-
ճառ պիտի ըլլան :

ՄԵՆԻԿ

Մնացեալը յաջորդով

ՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵՐԱՐ

Նախորդ մէկ յոդուածիս, այս էջե-
րուն մէջ, խորագիր ըրած էի Վարժու-
թեան Գերիները, ինծի նշանակեալ ու-
նենալով քիչ մը ծանրանալ հինցած չա-
րիքի մը վրայ՝ որ թրքախօսութիւն կը
կոչուի : Քիչ մը ըսի, բայց ինչ փոթի
թէ անաչառ սկիզբով թիւներս շատ
մը թաղուն գոյրոյթներ՝ արթնցուցած
պիտի ըլլային անոնց քով որ թրքա-
խօսութեան անմեղ եւ անգիտակից գե-
րիները եղած են իրենց գոյութենէն
ի վեր, խեղճե՛րք :

Անշուշտ հայհոյանք մը չ'պիտի նը-
կատեմ՝ ինծի համար՝ իսկ մը բարեկամ
ընթերցողներու այն փափաքը՝ որ շատ
անգամ գրեմ, եթէ միայն մէկ ձեռքով
չորս ձմերուկ բռնելը կարելի ըլլար :
Ծնորհակալութիւնն այդ համակիր ըն-
թերցողներուն. բայց պիտի գտնուէին
չասե՛ր՝ որոնք չեն ուզեր ինծի ներել
յախուռն գրելակերպս, շանթաբող
բառերս, թուրքերէն խօսելու վարժ
հայերը ազգասեպանք անուանելու սա-
տիճան : Վկայ Ձեզի (Տէ՛ր քուեա՛լ ըզ-
մեզս իմ) մեր Արամահայր Տ. Ա. Պալ-
եանն ալ որ Արշալոյսի անցեալ շար-
թուան թիւին մէջ, ապերախտը կը
պոռայ երեսիս, անոր համար որ թըր-
քախօսութեան զէ՛մ պայքար մը մղել
ուզելով ուրացած եղած եմ ինչ որ թուր-
քին կը պարտինք մեր դարաւոր գոյու-
թեանը եւ մեր լեզուին պահպանմանը
համար :

Ա.Ձ.Գ.Ա.ՅԻՆ

ԼՈՐՐԵՐ

Հ. Բ. Բ. ՄԻՈՒՓԻՆ

Շարժված օրը խուճա մը ևրար- կիրցնելու ատարադրութեամբ խնդ- րագիր մը մատուցուած է Գեր. Ա. Առաջնորդին, ինչպէս որ բարե- խօսե շարժական Բարեգործական Ընդհ. Միութեան բաժնի արդէս զի փութով կարեւոր գումար մը հաս- ցուի Արարիկի տնօրէնութեան :

Մեզի այս շտաբը տուողը կ'ըսէ թէ՛ արդէս շատ մեծ է ու պէտքը զգալի . մենք ալ կ'ուսեցնենք որ՝ այդ պէտքը ամեն գաւառներու համար նոյնն է . և զժողովրդաբար տեսական, ու եթէ կուզէք՝ մնայուն . բայց քանի որ հիմայ խնդիրը մաս- նաւորուած է Արարիկի վրայ, մենք ալ կը փափաքենք որ Հ. Բ. Բ. Մի- ութիւնը կարեւոր գումար մը զրկէ հան, Գահիրէական Արարիկցիներէ անհնց նախնականութեանն չը- տուածելու համար գտնէ . . . :

Ասիկա է որ դիտարկենք Հայի- Բարեգ. Ընդհ. Միութեան թէ՛ հա- ւաստի աշխատներէ տեղեկացած ենք որ Արարիկը զրկուած նպատի ո՛ր եւ է գումար, Առաջնորդը իր ամա- կաններուն տեղ վար կը գնէ եղբր, կամ միայն անոնք կը նպատաւոր- ուին որ Առաջնորդարանի հետ հե- ուիէն մտան շփում՝ կամ աջակց պաշտօն մը ունին, ուրեմն՝ անոնք բուն ազբարը կը զրկուի բացարձա- կապէս (Մեծ ձուկը պղտի ձուկը կուլ կուտայ յի . . . օրէնքով :

Հ. Բարեգործական Ընկերու- թիւնը ուղիղ բան մը կ'ընէ ուրեմն, եթէ հան աստապու ազբարներուն մէկ յոջակը այս տեղ իսկ պատ- բասեւ լայ, ու իւրաքանչիւրին հոս գանուող մէկ ազգականին մի- ջոցա իր նպատակները ուղղակի զը- կէ իրենց տէրերուն :

ՃԱՄԱՆՈՒՄ

Շարժված օրը՝ կէս օրէ յետոյ ժամը 3 ին՝ քաղաքս ժամանեց տեղ- ւոր Հայ - Հոստէլարանոց նորնտիր Առաջնորդ Գոյունեան Գերապոյժու- Հայ հասկնական հասարակու- թեան անդամներուն հետ ուրիշ այլ և այլ ազգութիւններէ խուռն բազմութիւն մը կը անտուէր ծարպէլ կինեայի Առաջնորդ արանը՝ ուր հա- յերէն, ֆրանսերէն և արաբերէն ուղերձներ կարգացուեցան :

Ներկաներուն մէջ՝ ի միջի այ- լոց՝ կը տեսնուէին թրանսական հիւ- պաստարանէն երկու ներկայացու- ցիչներ, Հայոց Առաջնորդարանի կողմէ քահանայ մը, Աստին, Յոյն Գաթալիկ Մարտիրոս, և Աւստրիացի կը զերը, և Յրէնիւր իրենց վարժա- րանի նուագածուաց խումբով, ու- բուն ներկայութիւնը նոր փայլ մը կը բերէր այդ փառաւոր ընդունե- լութեան :

Գոյունեան Գերապոյժու խիստ յուզուած կերէր : Սերգարդ, փայելակազմ, ժըզ- տազէմ խիստ համակրելի ու պատ- կասելի դէմք մ'է 60 տարեկանի

մտ : Ուսեալ լեզուագէտ և աստ- ուածարան :

Նորին Արժիագատուութիւնը պա- տիւ կը բերէ իր հոսին, որ կը յու- սանք թէ մեծապէս պիտի օգտուի այսպիսի արժանաւոր Առաջնորդի մը հայտնութեանն :

Պէտք է սպասել սակայն, թիչ մըն ալ մարդը իր գործէն գտան- լու համար :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՐՐ

ԳՐԱՄԱՐՏ

Մեզմէ սեանք կը կարծեն թէ՛ միայն հայերն են որ կուտակական կախեր և լրագրական զրէլ պայ- քարներ կուսնենան . չէ՛, ընդհակա- ուսիք, ամէն ազգի մէջ ալ կը գըտ- նուի այդ արտէն . թէեւ ուրիշնե- բուն ըրած կախերէն պէտք չէ որ մենք ալ քաշաւերուինք ու զըրը- ակնք :

Անցեալ շաբթու « Բրոկրէ » բա- ւական կարեւոր կախ մը արձանագ- րեց, որ տեղի ունեցած է Արար- կան կարեւոր թերթի մը խմբագրի- ներէն միայն և տեղացի լրագրագամ կուտակութեան մը պետին միջև, երկուքն ալ տեղաշուաւոր :

Խմբագիրը « Բրոկրէ » ին միջո- ցա կը դատարար թէ՛ իր հակա- ուակարգի բարեկամները կուսն մի- ջամուած և գանակոծած են զինքը, իսկ պետերին իր ձեռքը խածած է . վերջապէս թերթի մը՝ որ կը յիշեցնէ չորս հինգ տարի առաջ պատուական հայու մը մեր Ս. Օ. ին ձեռքը խած- նելը . . . :

ԳՐԱՐՁԱՆԻ ԿՈՒԻ

Էլ-Աղհարի համալսարանին ու- սանդներուն մէջ կուլ մը տեղի ունեցած է, այնպէս որ ոստիկանա- կան միջամտութեան պէտք տես- նուած է . շատ մը վերաւորակներ կան :

ՅԱԻԵԼՈՒՄ

Նոր օրէնքներու համաձայն ծը- րագրներու վրայ եղած փոփոխու- թեանց պատճառաւ, կրթական նա- խարարութեան մէջ ծառայող 434 պաշտօնեայներու թոշակներուն զը- րոյ կարեւոր յաւելումներ եղած են :

ՄՁՎԻՅՆԻՒՄ

Վագֆներու Տնօրէն Վ. Հիւ- սէին Իրաշի բաշա, միջկիթներուն կանոնադրութեանց մէջ բարեփո- խումներ մտցնելու միջոցներուն վը- րայ կը մտածէ :

ԱՌՈՂՁՈՊԱՀԱՎՈՆ

Ելժուական նախարարութիւնը առաջադրական վարչութեան 1000 սովետ նոր վարի մը բացած է տա- րափոխի հիւանդութեանց դէմ պայքարելու համար :

ԼՐԱԳՄԱԿԱՆ

« Բրոկրէ » ամենայն իրապա- հուովեամբ կը հրատարակէ թէ՛ հաս- տատուած է որ՝ ազգայնականներու կողմէ ֆրանսերէն « Փան » ի, « Ֆի- կարս » ի, « Եղէշ » ի և ուրիշ Ան- զըլիերէն թերթերու 5000 սովի շաֆ գումար մը ծախուած է իրենց ի նպատակ յօգուածներ հրատարու- կել տալու համար :

ԲՐՈՒՄԱՐՏ

Ս. մայս 10 ին կէս օրէ յետոյ

ժամը 4 ին կառավարական վարժա- րանի աշակերտաց միջև ըմբռնար արի տարեկան մրցում մը տեղի պետի ունենայ կիրքէի ձխարչաւի դաշտին մէջ, ընդ հոսանաւորութեամբ Բարձ- րապետի Խորիլին :

ՊԵՏԻՎԻՆԵՐԸ

Օրէնդիր ժողովը կողմէ կարդ- եալ Յանձնարարութիւնը անցեալ օր գոր- մարուած է քննելու համար Պէտե- վիները զինուորական ծառայութեանէ ազատ կացուցանելու օրինակիծը :

ՍՈՒՏԱՆ

Պաշտօնական զեկոյց մը կը ծա- նուցանէ թէ Պոր - Թէվիթիլէյէ հե- ուարական զիծը աւարտած է :

Խորթում ուղղակի հեռագրա- կան յարաբերութեան մէջ դրուած է Պոր - Մոնկալի հետ :

Նոյնպէս հեռագրական հաղոր- դակցութիւն հաստատուած է Պահլըր Էլ - Կալէլի և Պորի միջև :

ՆՈՐ ՕՐԷՆԻՐ

Էլ-Աղհար Համալսարանի վար- չութիւնը նոր օրէնքներ պետի հաս- տատէ հան ծառայող պաշտօնէից համար :

Յայանի է թէ վագֆներու վար- չութիւնը 10,000 սովի կը ծախուէ այն հաստատութեան համար :

ՀԻՃԱՂԻ ՎԱԼԻՆ

« Բիշամիլ » կը գրէ թէ՛ Հիճա- յի ընդհ. կառավարիչը Ռաթիպ բա- շա ընդ հոստութեամբ Կ. Պոլսի պի- տի տարակ, կառավարներ աշխոյժ ըլլալով թէ՛ եղկպտու կրնայ փոխ- չել, որ կը գտնուի արդէն իր ըն- տանիքը, կ'ըսուի նաև թէ՛ Բաթիպ բաշա եղկպտուի զանազան զրոմա- տաններուն մէջ 85,000 սովի պահ գրած է :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բեքերայուրի 1 Ապրիլ . - Մե. ծրն Բրիտանիա եւ Ռուսիա կարծիք- ներ կը փոխանակեն Մակեդոնիոյ մասին իրենց առաջարկած բարե. նորոգմանց ծրագրին վրայ . Այս բանակցութիւնը կրնայ ա՛յն կէտիև յանգ՛ի որ Անգլիա փախախի որ- պեսի երկու առաջարկներէն յսուած ազդու ծրագիր մը պատրաստի :

Ռաշիկիլը 1 Ապրիլ . - Օրա- վարմէրու պայտարիև հետեւախոյժ 250,000 հանգազորներ առանց աշ- խատքեան մնացած են միացեալ նահանգաց մէջ, մանաւանդ Օնիո եւ Բանիզլի միջև :

Բարիլ 1 Ապրիլ . - Պ. Ֆաշիէն եւ կաշի դախր աշցելորիներ փոխանակած են :

Ս. Բեքերայուրի 1 Ապրիլ - 2 ին- շուրականներու յնդախոյնական կազ- մակերպութիւն մը երեւան հանուած է . կարիւրի չափ մերսակալութիւն- ներ տեղի ունեցած են :

Հոռն 2 Ապրիլ . - Գործարանե- րու քախոր մը որ որմնադրի մը յու- դարկարութեան կը մասնակցէր, հակառակ ոստիկանական աշխար- արութեանց ուղեց Վրէիլի կրնապա- րակիև վրայ կանգ առնել : Ընդհա- րու մը տեղի ունեցաւ եւ գործա- լուները աշխուներ նետեցին զիմու- լուներուն վրայ, որով կրակով փո- խանակեցին . 3 գործարան մեռան 12 վիրաւորուեցան, եւ ոստիկաններէն ալ 11 հոգի վիրաւորուած են :

Պարիզի 2 Ապրիլ . - Սաս- կայոյց դասավարութիւն մը տեղի կուսնուայ հոս :

Ապացուցուած է որ ֆաղախի յարտրական կառավարիչները, իր- րե անիշխանականներու պետերուն մեծ գումարներ վճարած են ուրա- շիրները դարեցնելու համար . բայց որովհետեւ անոնց պահանջներու- թիւնը հետեւեւ անհասանելի սուսի- անեւ անած է, եւ դժգոհ մնացած են, սկսած են ուժանակներ գոր- ծածակ :

Հոռն 3 Ապրիլ . - Ընդհանուր գործադուրը այս սուտոս պատաւ . Ե- ղիսիսիսականներու յանդարտակն մեջ Պ. Վիոյիլի կարգապետից ապա- ցուցանելու համար թե ոստիկանները զեմի դիմած են ինքնապաշտպա- նութեան համար :

Սոեիա 4 Ապրիլ . - Արսախիև գործոց նախարար Պ. Փարիիլով ընդհուպ Ս. Բեքերայուրի պիտի մեկնի . Կրսուի թե այս նախար- դութիւնը Մակեդոնիոյ բարեկարգու- մանց հետ առնչութիւն ունի եւ շատ մը մեկնութիւններու տեղի կուսայ :

Կ. Պոլսի 4 Ապրիլ . - Վանի կա- ցութիւնը մեծապիտի կը պատ- ճատէ թե՛ կասնածը պիտի շարու- նակուի :

Կ. Պոլսի 3 Ապրիլ . - Վանի վի- ճակը միջոց մեծապիտի կը պատ- ճատէ . Կրսուի թե՛ Մարտ 27 ին սպաննուած հայերու թիւը 60 ի կը հասնի, 50 վիրաւորուած եւ անչալ- ցացած, շուկաները փակ կը մնան :

Հոռն 4 Ապրիլ . - 8,000 գոր- ծարաններ գերեզմանատուն երաւոյ ոստիկաններու հետ տեղի ունեցած ընդհանուր զոհ գնացած չորս գործարարց հոյակոյցիև վրայ պը- սակներ դրին . երեկ հանդարտու- թիւնը կը սխեւ . ընդհանուր գոր- ծարարը վայր պիտի դարիի :

ՍԵՂԱՆՈՒՄԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փայլոց թիւ 6, Սիւնիի մասնա-

ճիւղիկ թով, Ժիւսիի դիմաց .

Կը գնէ եւ կը ծախէ հրատարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժե- թղթերը, մասնաւորաբար Բրեշի Ծօն- սիէի հին և նոր, Բոմբէլի երկաթուղ- եաց եւ Բոմբոմայի ֆրանսական վաւե- րացեալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիստ նպաս- տաւոր դերէն կրնան օգտուիլ եղկպ- տարնակ մեր ազգայինները մեզի դի- մելով :

Մասնավճարներով - 25, 50, 100 - կարելի է արժեթղթերու արժանաւ, եւ մասնիկ պայմաններով աւանդի փո- խարէն՝ փոխտուութիւններ կ'ըրել :

Անգանու օրական ամեն տեսակ գործանութեանց, եւ տուեարական ամեն կարգի Պիեօներ զեղջիւու պատ- բաստակամութիւն :

Անգանու օրական եւ Պորսայի գոր- ծանութիւններ եւ այս կարգի գոր- ծերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կա- տարուին :

12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

